

**Վիկտորինա՝ „Արցախյան Ազատամարտը,, խորագրով**

20.05.2015

Մայիսի 19-ին Եղեգնաձորի ավագ դպրոցում „Սոսե Մայրիկ,, հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպվել էր վիկտորինա „Արցախյան Ազատամարտը,, խորագրով, որին ներկա էր ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը: Միջոցառման ընթացքում „Արցախյան Ազատամարտի,, վերաբերյալ իրենց գիտելիքները չափեցին Ագարակաձորի միջնակարգ, Գլաձորի միջնակարգ, Եղեգնաձորի ավագ, Եղեգնաձորի թիվ 1, թիվ 2 հիմնական և Մալիշկայի թիվ 1, թիվ 2 միջնակարգ դպրոցների աշակերտները:

Մրցույթի արդյունքում առաջին տեղը գրավեցին Ագարակաձորի միջնակարգ դպրոցի աշակերտները, երկրորդ տեղը՝ Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցի աշակերտները: Իսկ երրորդ տեղը կիսեցին Եղեգնաձորի ավագ դպրոցի և թիվ 1 հիմնական դպրոցի սաները:

Մրցանակային տեղեր գրաված թիմերին և բոլոր մասնակիցներին պատվոգրեր և շնորհակալագրեր հանձնեց „Սոսե Մայրիկ,, հասարակական կազմակերպության նախագահ, Արցախյան պատերազմի ազատամարտիկ Մարիամ Ստեփանյանը:

**Վիկտորինա՝ „Արցախյան Ազատամարտը,, խորագրով**

20.05.2015